

Գյումրու տեխնոպարկ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում է Գյումրու տեխնոպարկի ծրագիրը, որը կնպաստի Գյումրի քաղաքի բարգավաճմանը՝ վերածելով այն SS զարգացած ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական գոտու: Տեխնոպարկի տարածքում արդեն իսկ գործում են «Նեյշնլ Ինստրումենթս» մեխանիկայի և էլեկտրոնիկայի ոլորտների ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաները, «Դ-Լինք» ցանցային տեխնոլոգիաների համաշխարհային առաջատար ընկերության հետ համատեղ ստեղծված՝ տարածաշրջանում դեռևս միակ հետազոտական կենտրոնը, «Եռաչափ մոդելավորողների միությունը»:

<http://www.gitc.am/Gitc/>